

ՓՈՒՈՒՄՆ ՅԱՍՏԵԱՅՍ

ՎՍԵՄՔԱՌ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ

ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ԿԱՅՍՐՈՐԴԻՈՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ


ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՏՐՈՎԻԶ

Ռուսաստան եւ բոլոր աշխարհք դառն սգոյ եւ տրտմութեան մէջ ընկղմեցան Ապրիլի 12-ին, երբոր հեռագրական թելին աներեւոյթ կայծակը գումեց ամէն տեղ մեր ՎՍԵՄՔԱՌ ԿԱՅՍՐՈՐԴԻՈՅՆ տարածամ մահուամբ վախճանիլը Նիցցա քաղաքին մէջ ի գիրկս ՎԵՀՔԱՌ ԾՆՈՂԱՅ իւրոց եւ եղբարց եւ Արքայազն Հարսնացուն : Հեռագրին խօսքերն ասոնք էին. „Կատարեցան կամք Բարձրելոյն, որ կոչեաց առ „Ինքն զԹագաւորն մեր զԹագաժառանգ Կայսրորդին այսօր յ12 ժամու եւ 50 վայր- „կենի գիշերոյս : ԿԱՅՍՐՆ եւ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ խոնարհ հպատակութեամբ համբերեն վը- „տին հասելոյ ի վերայ նոցա, եւ երկիրպագանեն առաջի անքննելի կարգադրու- „թեանց Նախախնամութեանն Աստուծոյ“ :

Բոլոր Ռուսաստանի ժողովուրդները նոյնպիսի զգացմամբ լցուած՝ ցաւակից եղան եւ կլինին իրենց մեծարած եւ սիրած Կայսերական Ազգատոհմին, այսպիսի անակըն- կալ հարուածի ժամանակ. մանաւանդ որ ամենուն ալ յայտնի եւ քաջածանօթ էին հանգուցեալ Կայսրորդւոյն մեծամեծ կատարելութիւնները, որոց մէկն ալ այս էր որ զարմանալի ջանք մը ունէր նա իւր հայրենեաց ամէն հանգամանացը տեղեկանալու,

եւ գեղեցիկ հետաքրքրութեամբ կսիրէր հասկընալ թէ իւր ապագայ ինքնակարութեանը ժամանակ ինչ հնարքներով կրնար առաջ տանիլ իւր Վեհափառ Հօրը սկսած մեծամեծ բարեկարգութիւնները, եւ անոնցմով երջանկացընել իւր միլիոնաւոր հպատակները:

Մաղթեմք ուրեմն եւ մեք, երախտագէտ հպատակքս Հայկազունք, հանգուցեալ ծաղկահասակ Կայսրորդւոյն յաւիտենական անթառամ Թագին ժառանգութիւնը յարքայութեան երկնից, եւ Վեհ.Ֆ.Ս.Ռ. ԾՆՈՂԱՅ նորին զաստուածայինն մխիթարութիւն, եւ բովանդակ աստուածապահ Գերդաստանի նոցա երկար կեանք եւ զամենայն յաջողութիւն՝ յօգուտ եւ ի պարծանս լայնածաւալ աշխարհիս Ռուսիոյ եւ համօրէն ազգի մարդկան:



Վեհափառ Կայսրը լսելով իւր Որդւոյն հիւանդութեան ծանրանալը, Ապրիլի 6-ին ճանապարհ ելաւ Փերերպուրկէն 70 հոգւով, եւ անհնարին արագութեամբ ճանապարհորդելով՝ նոյն ամսոյն 10-ին գիշերը հասաւ Նիցցա: Փարիզու երկաթուղւոյն կայարանը տասը վայրկեան միայն ուշացաւ, եւ այն միջոցին տեսութիւն ըրաւ Գաղղիոյ Կայսեր հետ, որ եկեր կսպասէր կայարանը:

Հանգուցելոյն մարմինը նաւով կրերուի Փերրպուրկ. իսկ Օգոստափառ Կայսրը եւ Կայսրուհին հանդերձ որդւովք եւ ազգակցօք՝ կղառնան ցամաքով, այնպէս որ զրեթէ նոյն ժամանակին կհասնին մայրաքաղաքը:

Թեոդոսիոյ Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ հանգուցեալ Կայսրորդւոյն համար Հանգստեան պաշտօն կատարուեցաւ Ապրիլի 18-ին, եւ Գերապատիւ Առաջնորդը բազմաթիւ ժողովրդեան առջեւ համառօտ ատենախօսութիւն մը ըրաւ այն տխրական հանդիսին վրայ:

